

Յետոյ կցեց անոր այն տաղը, ուր երբ պարեր-
գունեքը կը հարցնէին

«Ո՛վ սպաննեց գայն .

«Ազադէ կը պատասխանէր .

«Մըցանակն ի՛մն է :

«Այն ատեն ցատկեց Պոմաքսեթրէս, որ
բազմած էր ընթրիքին, խնդրեց ասին մէջ առ-
նել Կրաստոսի գլուխը, իբրեւ թէ Յասոսինէն ա-
ւելի իրեն վայելէր այդ խօսքերն ըսել : Ասկէ,
արքան, զուարճացած մեծապէս, ըստ հայրենի
սովորութեան պարզեւ տուաւ մարդուն, մէկ
քանքար ալ Յասոսինին : Եւ այսպէս վերջացաւ,
կ'ըսեն, Կրաստոսի արչաւանքը, իբրեւ ճշմար-
իտ ողբերգութիւն :» (Պիւտաբոս, «Ջու-
գակչիոք», Գ. հատոր) :

Դժբախտ վերջացաւ եւ Արտաւազդի կեան-
քը :

Շատ չանցած սպաննուեր վին Հոռմի ե-
ռապետութեան միւս երկու անդամներն ալ,
Պոմպէոս եւ Կեսար : Կազմուած էր նոր եռապե-
տութիւն, — Օկտաւիոս, Անտոնիոս եւ Լեպե-
տոս : Արեւելքը բաժին ինկած էր Անտոնիոսին,
որ պարտուեր էր պարթեւներու Հրահատ Գ.
թագաւորին դէմ մղած իր պատերազմին մէջ :
Ի՛նչ ընծայ պէտք էր տանէր իր սիրուհի Կղէո-
պատրային : Զէնքը ոչինչ տուեր էր իրեն : Ան
խարդախութեամբ ձեռք անցուց Հայոց Արտա-
ւազդ թագաւորը՝ Կղէոպատրային նուէր տա-
նելու :

Անտոնիոս կողոպտեց Անահիտի հարուստ
տաճարը Եկեղեցաց դաւառին մէջ, յախշտակեց
անոր ոսկեձոյլ արձանը, արծաթ շղթաներով
կապեց Արտաւազդը, գերի վարեց անոր կիներն
ու երախաները, եւ տարաւ Աղեքսանդրիա :

Հայոց թագաւորը իր տարաբախտ գերու-
թեան ծանրութիւնը տարաւ հելլէն կրթութիւն
ստացած, զբաղէտ մարդու մը վայել արժանա-
պատուութեամբ : Այդպէս էր եւ իր ընտանիքը :
Զանոնք կ'անցընէին Աղեքսանդրիոյ փողոցնե-
րէն, կը տանէին Կղէոպատրայի գահուն առ-
ջեւ, խոստանալով ազատել զանոնք եթէ աղեր-
սեն Կղէոպատրային : Անյողգողդ մնաց հայ
արքայական ընտանիքը :

Իսկ անդին Հոռմի մէջ վրդովուած էին Ան-
տոնիոսի այս արարքներէն : Օկտաւիոս կը հա-
մակրէր հայոց թագաւորին եւ կ'աշխատէր թե-

թեցնել անոր դրութիւնը : Այս բանը աւելի
զբզուեց Անտոնիոսը, որ Արտաւազդը գլխատել
տուաւ 31 թուին : Ինքն ալ ամօթալի վախճան
ունեցաւ շուտով, եւ անձնասպան եղաւ :

Արտաւազդ կը ներկայանայ հայ պատմու-
թեան մէջ իբրեւ համակրելի դէմք մը : Այո՛,
դուրկ ինքնակալի մը կորովէն, վճռականու-
թենէն, բայց դաստիարակուած, արուեստի
սիրահար, ու արուեստագէտ : Մանկութենէն
սնած հելլէն մշակոյթով, մինչեւ վերջ խան-
դավառուած մնաց հելլէն արուեստով : Պատ-
մութիւնը զինքը կը ճանչնայ արդէն «հելլէնա-
սէր» մակդիրով : Ու արդարեւ հելլէն արուես-
տագէտներով լեցուն էր միշտ իր մայրաքաղա-
քը : Անչուշտ որ իր շրջապատն ալ արուեստնե-
րու ճաշակն ու հասկացողութիւնը ունէր : Վը-
կայ են հելլէն սղերգութեանց ներկայացում-
ները որ իր օրով տեղի կ'ունենային : Եթէ նոյն-
իսկ ժողովուրդի լայն խաւերուն մատչելի չէր
հելլէն արուեստը, — թէեւ մէկուկէս դարէ ի
վեր արդէն Հայաստան կ'ընդունէր պատուա-
տը հելլէն հանճարին, — գոնէ կար արուեստի
ճաշակն ունեցող հայ ընտրանի մը :

Դժբախտաբար միայն մէկուն անունը հա-
սած է մեզի Հայաստանի մէջ իր օրով ներկա-
յացուող հեղինակներէն : Եւրիպիդէսն է ան,
Սալամինէ ծնած Գրիստոսէ մօտ 500 տարի ա-
ռաջ : Նախ ըմբիշ, յետոյ նկարիչ, ճարտասան
եւ իմաստասէր, Եւրիպիդէս 452-ին ինքզինք
նուիրած էր թատերական բանաստեղծութեան :
Գրած է իննիսուներկու ողբերգութիւններ, ո-
րոնց գլխաւորներն են Ալկեստ, Մեդէա, Հիւպ-
պոդիտէս պսակեալ, Յովն, Հեկաբէ, Հերակ-
լիանք, Անարմաք, Աղաչաւորք, Տրոյլիք,
Ելեկտրա, Հեղինէ, Եփիգենիա ի Տաւրիա, Ու-
րեստէս, Փիւնիկանիք, Հերակլէս Մոլեգին, Ե-
փիգենիա յԱլիս, Բագոսեանք : Այս վերջին
ողբերգութիւնն է որ Հայոց արքունիքին մէջ
կը ներկայացուէր Բակուրի հարսնիքին ատեն :
Անոր մէջ Եւրիպիտէս կը նկարագրէ սոսկալի
մահը Պենթոսի, որ դէմ էր կեցեր եւ չէր ու-
զեր որ Յունաստանի մէջ Բագոսի պաշտամուն-
քը մտնէ :

Մեր ձեռքը բան մը հասած չէ Արտաւազդի
իրեն ողբերգութիւններէն, ոչ ալ որեւէ բան
գիտենք անոնց անուանը եւ բովանդակութեա-